Եթերի սպասարկման մենեջերի պաշտոնական պարտականությունները

Ընդհանուր դրույթներ՝

Եթերի սպասարկման մենեջերը հանդիսանում է ուսուցման բաժնի աշխատակից:

Մենեջերի նշանակումը և աշխատանքից ազատումը կատարվում է կազմակերպության տնօրենի հրամանով:

Մենեջերի ֆունկցիոնալ պարտականությունները՝

• Համակարգել եթերում մարզիկների աշխատանքը,

• Վերահսկել խաղերի ընթացքը սահմանված կանոնների շրջանակում՝ առանց խախտումների,

• Հետևել մարզիկների պարտականությունների կատարմանը,

• Կազմել հաշվետվություններ մարզիկների հերթափոխի վերաբերյալ,

• Ուղղել մարզիկների սխալները,

• Անհրաժեշտության դեպքում մարզիկներին վերապատրաստման,

• Ժամանակին տեղեկացնել ուսուցման բաժնի ղեկավարին մարզիկների սխալների վերաբերյալ,

• Հաղորդակցվել այլ բաժինների հետ՝ ըստ անհրաժեշտության:

Մենեջերի իրավունքները՝

• Ծանոթանալ կազմակերպության ղեկավարության որոշումներին, որոնք առնչվում են իր գործունեությանը, ստանալ տեղեկություններ և փաստաթղթեր բոլոր հրամանների, կարգադրությունների, նորմատիվ ակտերի վերաբերյալ, որոնք վերաբերում են իր աշխատանքին,

• Մասշտաբային ստորաբաժանումներից պահանջել տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են իր աշխատանքային պարտականությունների իրականացման համար,

• Առաջարկություններ ներկայացնել բաժնի աշխատանքի բարելավման և աշխատանքի օպտիմալացման վերաբերյալ,

• Բարձրացնել որակավորումը տարբեր ուսուցման ձևերով,

• Առաջարկել խնդիրների և սխալների լուծման եղանակներ իր լիազորությունների շրջանակում,

• Կազմակերպության այլ բաժինների աշխատակիցների հետ հաղորդակցվել ընթացիկ աշխատանքային խնդիրների վերաբերյալ,

• Առողջության կամ կյանքի սպառնալիքի դեպքում հրաժարվել կատարել իր պարտականությունները և լքել աշխատավայրն առ ժամանակ:

Մենեջերի պատասխանատվությունը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

• Սույն պաշտոնի նկարագրությամբ նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ դրանց կատարումից խուսափելու համար՝ Հայաստանի Հանրապետության գործող աշխատանքային օրենսդրությամբ սահմանված սահմաններում:

• Գործատուին կամ աշխատողներին նյութական վնաս պատճառելու համար՝ Հայաստանի Հանրապետության գործող աշխատանքային և քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված սահմաններում:

• Իրենց գործունեությունը իրականացնելիս կատարված հանցագործությունների համար՝ Հայաստանի Հանրապետության գործող վարչական, քրեական և քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված սահմաններում:

• Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար:

• Ներքին աշխատանքային կանոնակարգի, աշխատանքի և հանգստի գրաֆիկների, կարգապահության, ինչպես նաև անվտանգության չափանիշների համակարգված խախտման դեպքում:

• Կորպորատիվ հաղորդակցության և գործարար էթիկայի կանոնների կոպիտ խախտման դեպքում:

• Գաղտնի տեղեկատվության, առևտրային գաղտնիքների բացահայտման համար:

«Սեղանի թենիսի ազգային պրոֆեսիոնալ սպորտային լիգա» ՍՊԸ տնօրեն՝

Հակոբ Օհանյան

_____